

«Ահա մենք մեր տունը բերինք լեռան վերայ սպաննուած եղնիկ մը... զոր յաջողագէտ որսացինք»:

Հայոց ու Պարթեւաց զոյգ թագաւորները ու համակ հայ-պարթեւ հանդիսականները որոտընդոտ ծափերու եւ ուրախութեան բացազանչութիւններու մէջ շնորհաւորեցին դերասանը, որ այսպէս Ներիպիդէսի ողբերգութեան կու տար իրական ու չօչափելի աղղու վախճան մը: (Տես Կիկերոն եւ Պլուտարքոս):

Հոռմի ու Պարթեւներու այս պատերազմներուն շարունակութեան մէջ Արտաւազդէ չէզոք մնաց ու հոռմէական կաթիլ միակ արիւն թափուելուն պատճառ չեղաւ: Պարթեւները իրենց յաղթական արշաւանքները շարունակելով՝ յարձակեցան Ասորիքի ու Պարսկաստանի վրայ: Արտաւազդէ շարունակեց պահել իր չէզոքութիւնը: Ո՛չ մէկ լուրջ պատմադէտ կը խօսի Արտաւազդի մասնակցութեան մասին: Նոյնիսկ կասկածոտ Կիկերոնը, որ պահ մը վախճալով թէ Արտաւազդէ կրնար Կապադովկիոյ վրայ յարձակիլ, ու այս պատճառով՝ օգնութեան փութացած էր Կապադովկիացւոց՝ Արտաւազդի երեւակայան յարձակման դէմ դնելու համար, երբ վերջէն իսկապէս նշմարեց Արտաւազդի չէզոք ընթացքը՝ յայտարարեց որ «Հայը չէզոք կը մնար, ու չէր փափաքեր տրամադրուիլ ո՛չ Պարթեւներուն եւ ո՛չ Հոռմի շահերուն»:

ՆՈՒՊԱՐ ՄԱԳՍՈՒՏԵԱՆ
(Շարունակելի)

(¹) Ապետիք ինքզինքը պարսկահայ կաթողիկէ կը դասնէր ու կը գրէր, նոյնպէս նաեւ զանազան պաշտօնական տեղերը. Վիեննայի Ռազմական բարձրագոյն խորհուրդի թուղթերու մէջ այսպէս գրուած է «Petrus Bedik Persianer» (Prot. Exp. 1677, f. 634) - «Petrus de Bedik Persianer» (1677, fol. 630). - «der

ԱՊԵՏԻՔ ԿՈՄՍԻ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԿԵԱՆՔԸ

(Շար. տե՛ս «Բազմավէպ» 1946, էջ 306)

ԳԼՈՒԽ Գ.

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԱՂԹ

... Փոքր Ասիոյ մէջ Միջերկրականէն 125 քիլոմետր հեռու, հին, պատմական շատ փոփոխութիւններ տեսած, առեւտրական շարժումով լի քաղաք մը կայ: Այս քաղաքն է Հալէպ: Հիւսիսէն հարաւ, Արեւելքէն դէպի Արեւմուտք անապատները կտրոզ բանուկ ճամբաներու խաչաձեւում մը ունի, որոնց վրայէն յամրաքայլ ուղտեր կը տանին ու կը բերեն վաճառքներով լեցուն սնտուկներ: Քաղաքին մէջ տեղապահ գունդերու մեծ զօրանոց մը կայ: Հալէպ 1516էն ի վեր Օսման ձեռքերու մէջ է. բայց քաղաքին բնակչութեան մեծ մասը քրիստոնէայ հայերը կը կազմեն:

Որպէս զի Հալէպի, և ընդհանուր կերպով այդ գաւառներու բնակչութեան գաղափար մը կազմենք՝ պէտք է յիշել անոր զարմանալի խառնուրդը, քրիստոնէութեան և իսլամութեան: Հոն իշխանութեան զուխ եղող մուսուլմաններու քով՝ կ'ապրէին ամէն տեսակ քրիստոնեաներ. սիւրիացիներ, պարսիկներ, մարոնցիներ, յունաղաւաններ, յոյն ու հայ կաթողիկէներ, ու մինչեւ իսկ մանր աղանդներն ունէին իրենց ներկայացուցիչները: Քարակէօզ ընտանիքը, որմէ Պետրոս Ապետիք կը սերի - ինչպէս պիտի անդրադառնանք - կը պատկանէր պարսկահայ կաթողիկէ հասարակութեան (¹): Անոնք

Persianische Gesandte... Petrus Abedik» (Prot. Registr. 1677, f. 488) - «dem Persianer Peter Bedik» (1680. V. 15), և այլն: Հունգարական վաւերացութիւնը ու կոմսական գինանշանն ալ կը կրկնեն իր պարսկահայ ծագումը, երբեմն «Persa-Armenusak» ալ կը գրեն:

ամէնքը իրենց վաղեմի սերունդներով միշտ քրիստոնէայ մնացած են. այդ զինուած մահմետական ծովին մէջ, կրելով հանդերձ հալածանքներ՝ ուժեղ կղզիներ ձեւացուցած են: Քրիստոնէութիւնը ճիշտ Ապետիքներու, լաւ եւս Քարակէօզներու Արշակունի թագաւոր-նախնիքներու ձեռքով տարածուած է Տիգրիսի և Եփրատի ափերուն վրայ: Նետուրական ժամանակագրութիւններու մէջ յիշատակութիւններ կը գտնենք այս թագաւորներու և Պարսկաստանի մէջ՝ գոյութիւն ունեցող քրիստոնեաներու յարաբերութիւններու մասին: Կը գրէ Մահրի Իպն Սիււլէյման ալ՝ թէ այս խաղաղ յարաբերութիւնները Արշակունիներու շրջանին երթալով կը զօրանային: Վերը յիշուած ժամանակագրութիւններէն յայտնի է որ Պարսկաստանի մէջ մեծ աղղեցութիւն ունէին քրիստոնէայ հայերը, որոնք յետոյ սակայն հալածանքներու ենթարկուեցան իշխանութեան հասած Սասանեաններու կողմէն: Այս հալածանքները այն տառն միայն դադարեցան - եթէ ժամանակակից քրիստոնէական աւանդութիւններու և ժամանակագիրներու կարելի է պատմական ստուգութիւն մը ընծայել - երբ Պարսկաստանի քրիստոնեաներու Պատրիարքը՝ լուսնոտութենէն հրաշքով բժշկեց դահակալող թագաւորին աղան:

Այսօր այլեւս որոշ է (վերի թագաւորին անունը յիշուած չէ ժամանակագիրներու քով) որ Պարսկաստանի մէջ միայն Գ. դարուն կարելի է բուն քրիստոնէութեան մասին խօսիլ, ինչպէս կ'աւանդեն մեզի Միջին դարու ասորի ժամանակագիրներն ալ: Ասորեստանի ու Քաղէաստանի աստուածաշնչական սահմաններու մէջ արդէն Գ. դարուն ալ քրիստոնէութիւն կար, սակայն աւելի ուշ՝ Նիզիսիայէն սկսաւ տարածուիլ քարոզչութիւն մը, որ, ասորիներու համաձայն, մարոնցիներու արդիւնքն է: Թէ արդեօք պարսկական դահակալ հարստութիւնը, այսինքն Արշակունիները, ու հոս բնակող հայութիւնը երբ և ինչ պարագաներու բերումով

քրիստոնէութիւնը ընդունած են, պատմական ամէնէն արդի խուզարկութիւններն իսկ չեն կրնար ճշգրիտ պատասխան մը տալ: Ամէն պարագայի մէջ, ինչպէս անգլիացի պատմագիրներն ալ կ'ըսեն, օր. J. Labourt, հաւանական կը կարծուի որ Պարսկաստանի մէջ Արշակունիներու օտար ծագում ունենալը՝ պատճառներէն մէկը եղած ըլլայ քրիստոնէութեան հանդէպ իրենց ցոյց տուած բարեացակամութեան որ կամաց կամաց արեւակցական զգացումի մը փոխուեցաւ: Ասոր հակառակ հոն ծլած Սասանեաններու հարստութեան մոլեռանդութեան հետեւանքով սկսան հալածանքները, որոնք քրիստոնէայ հայերու մէկ մասը շրջակայ երկիրները ցրուեցին յաջորդ դարերու ընթացքին: Արշակունիներու ցոյց տուած «համբերատար ու բարեացակամ» վարմունքը բոլոր կրօնքներու հանդէպ՝ ժամանակները կանխող մարդասիրական հոգիի ու քաղաքակրթութեան վկաներ են:

Թէ արդեօք վերոյիշեալ հայ գաղութներէն մը խումբին կը պատկանէին Պետրոս Ապետիքի նախնիքները, որոնք հնուց ի վեր պահէր էին իրենց քրիստոնէութիւնը, կարելի չէ այսօր որոշ կերպով հաստատել: Միմիայն Պետրոս Ապետիքի գրութիւններու վրայ հիմնուելով կրնանք ցոյց տալ թէ նախկին դարերուն մէջ ուր յայտնուեց են իր քրիստոնէայ նախնիքները: Ինքը վկայութեան կը կոչէ Կալիստոս Նիկեփորոսը և Ս. Գրիգոր Սուրբաբի կենսագրութիւնը, որոնց մէջ կը խօսուին Արշակունիներու մասին: Կը պատմէ նոյնպէս թէ իր նախնիքները ցրուած էին, և թէ բարբարոս սկիւթացիներէն աւերուած էր հայկական մայրաքաղաքը Անին, ուր անոնք բնակած էին: Իբր աղբիւր կը յիշէ Պետրոս Բելլոնիոս Կենումանոսը: Շահ Աբաս Ա, ուզելով ազատիլ դարերէ ի վեր իսլամ լուծին տակ ձնչուած ու մեծ զանգուածներ կազմած քրիստոնեաներու տոգոհութիւններէն ու ապստամբութիւններէն, անոնցմէ երեւելի ու աղղեցիկ ընտանիքներու անդամները իսպահան կանչեց: Նոյն

նպատակով և մի և նոյն ժամանակ քրիստոնեաներու մեծ զանգուածներ Պարսկաստանի հարաւային կողմը՝ ծովեզերքը տեղափոխել տուաւ։ Յետոյ թուրք յարձակումներու ընթացքին տեղափոխուած հայերը անբաւ նեղութիւններու ենթարկուեցան։

Հալէպի մէջ, ինչպէս տեսանք, բազմաթիւ քրիստոնեայ հայեր կ'ապրէին։ Բնականաբար Ապետիքի ծնունդը կանխող տաճնակ մը տարիներուն՝ անոնք արդէն աւելի կազմակերպուած ու խաղաղ կեանք մը ունէին, որ քիչ անգամ միայն հոս կամ հոն կը խանդարուէր ատելութեան հետեւանքով։ Հալէպ բնակող հայերը կերպը լաւ գիտէին թուրքերու լուծին տակ անգամ բարգաւաճեցնելու իրենց արուեստն ու վաճառականութիւնը որ իրենց հարստութեան անսպառ աղբիւրն էր։ Անոնց ձեռքը մինչեւ Բարձրագոյն Դուռն ալ կը հասնէր, և երբ քրիստոնեայ ծնողներէ ելած փաշա մը իշխէր գաւառին, ան միշտ իր ազգակիցներու բարօրութեան կ'օգնէր, մանաւանդ երբ հաւատացեալ ըլլար քան Անատոլի թուրք կառավարիչ մը։ Մոլի թուրքն իսկ Հալէպի կեդրոնական բուրժուականութեան փայլուն աթոռին վրայ, կը մեղմանար ոսկիներու ձայնէն։ Այսու հանդերձ շատ նախանձելի չէր այդ կիզիչ կլիմայի տակ, նեղ փողոցներով շրջապատուած տուններու թխաղէմ բնակիչներու վիճակը, որովհետեւ շատ անգամ երկիրը խմած է անոնց արիւնը։ Երբ բարբարոս վոջմակներ յարձակէին հարուստ ժողովուրդին վրայ, սփառնէին և ենիչեւրներու ամենեւին հոգը չէր ըլլար - ինչպէս այսօր ալ - կեանքը պաշտպանելը։ Բայց 1620ի ատենները բաւական անդորր էր կեանքը, թէեւ տուրքերը ծանր, բայց փաշան աւելի մարդասէր էր և բուրդի ու մետաքսի գործը առատ շահ կը բերէր բնակիչներուն։

Այս քաղաքին մէջ կ'ապրէր մեծ ազգեցութիւն ունեցող Քարակէօզ ընտանիքը։ Մեր Պետրոս Ապետիքի մեծ հայրը, Ապետիք Աղա, այս Քարակէօզ ընտանիքի սե-

րունդէն էր, որ ամբաւ հարստութիւն ժառանգած էր հօրմէն, և Քիլիս կը բնակէր։ Ապետիք Աղան Սուլթան Մուրատի ժամանակ Սուրիոյ, Միջագետքի և Փոքր Հայքի գլխաւոր տուրք հաւաքողն եղած էր. մասնակցած էր պարսիկ-թուրք կռիւներուն, Բարսիլոնի կատաղի կռիւէն վերջ, պարսիկ զօրավարի որդիին հետ գերի ինկած էր, որմէ դժուարաւ ու շատ ուշ կրցաւ ազատիլ։ Անկէ վերջ Հալէպ ապրեցաւ, ուր բացի իր շահաբեր գործէն՝ իր ծագումին պատճառով ալ մեծ պատիւ կը վայելէր, ոչ միայն իր հայ ազգակիցներէն այլ նաեւ պարսիկներէն, թուրքերէն ու սիւրիացիներէն։ Քաղաքին մէջ սքանչելի պալատ մը ունէր։ Իր յարաբերութիւնները այնքան բարձր էին որ Բարձրագոյն Դուռնէն զանազան առանձնաշնորհութիւններ ձեռք բերած էր Հալէպի համար։ Իր կինը, Շահ-Մամուզ, Քիլիսի ճոխ ընտանիքէ մը ընտրած էր։ Ժամանակակից գրիչները զարմանքով կ'արտայայտուին իր մարմարաշէն պալատի և անոր մեծահարուստ կահաւորումի մասին։ Լեհացի ճանապարհորդ մը այսպէս կը գրէր անոր մասին. « Խոճա Ապետիք մեծ ու ազգեցիկ մէկն է։ Քաղաքին մէջ փաշայի մը նման կը շրջի։ Մաքսի, քաղաքապետարանի, ոստիկանութեան, խանութներու ու բաղնիքներու հսկողութիւնը իր ձեռքն են »։ « Չէլէպի » մակդիրը կը կրէ որ նշան մ'էր իր բարձր աստիճանին։ Մինչեւ 1632 թ. ձեռագիրներուն մէջ կրնանք հանդիպիլ անոր անունին։ Սակայն կրօնական քաղաքականութիւնը զինքն ալ հարուածեց։ Ապետիքի վերջին տարիներուն Մուրատ Գ սուլթանը, որ 12 տարեկանին բարձրացաւ օսմանեան գահը, մօրը խնամակալութենէն ազատելէն վերջ, երկու արշաւանքներ կատարեց Պարսիկներու դէմ, և անոնց ձեռքէն խլեց Պաղատաւը։ Հազիւ 29 տարեկան էր դեռ՝ երբ մեռաւ անորդի ու իրեն յաջորդեց Իպրահիմ Ա., որուն իշխանութիւնը ընդհանուր դժգոհութիւն առաջ բերաւ չափազանց անզուրկ ըլլալուն պատճառով. դժգո-

հուծիւնը այն աստիճանի հասաւ որ իր թիկնապաշ ենիչերիները զինքը խողխողեցին։ Այս արիւնհեղութիւններու ժամանակ Հալէպի իշխանները, թուրքերը, ստիպեցին Ապետիք Աղան կրօնքը ուրանալու ու մահմետականութիւնը ընդունելու։ Սակայն Ապետիք որ չորս եկեղեցիներ կառուցանել տուած էր իր ծախքովը - որոնցմէ մէկը մարոնցիներուն բաժին ինկած էր - ոչ միայն հանգստութեան օրերուն արժանի ցոյց տուաւ ինքզինքը իր քրիստոնեայ նախնիքներուն, այլ նաեւ վտանգի և մինչեւ իսկ մահուան ժամանակ։ Տեղակալ Խալիլ փաշան Հալէպի բերդին մէջ գլխատել տուաւ վաթսուս տարեկան ծերունին։ Աղբիւրի մը համաձայն գլխատումէն վերջ փաշան գոչեր է. - « Բացառիկ կարողութիւն և իմաստութիւն կը բնակէր այս գլխուն մէջ։ Ինչպէս մարմինը հոգին ալ կրցաւ սրտերը շահիլ։ Երբեմն դժնդակ է Փատիշահին հրամանը կատարել... »։

Ապետիք Աղայի եղբայրը Աստուածատուր (այսինքն Աստուածավախ), ուրիշ անունով ու համառօտուած ձեռով Ապետիք, կ'ապրէր Պարսիկ Շահին արքունիքը, ուր հրաւիրուած էր։ Այնքան հռչակաւոր մարդ էր որ վաղէ իտալացի գրիչը իր Պարսկաստանի մասին գրած գրքին մէջ երկարօրէն կը խօսի անոր յատկութիւններու մասին⁽²⁾։ Խոճա (այս մակդիրը իր գիտութեան համար ընդունած էր) Ապետիք սքանչելի մարդ մ'էր, քրիստոնէական առաքինութիւններու փայլուն օրինակ մը։ Երբ թուրքերը գետնութեան վարեցին հազարաւոր քրիստոնեաներ, նա իր հարստութիւնը գործածեց հազարներով քրիստոնեաներ փրկանաւորե-

լու համար, վերադարձնելով որդին՝ ծնողքին, այրը՝ կնոջ։ Շահ Աբաս Ա. այնքան կը սիրէր զինքը՝ որ Ապետիքի հետ ինքզինքը նկարել տուած էր ընտանիքով միասին, ու այդ նկարը երկար ժամանակ Իսպահանի արքունիքի զարդերէն մէկը եղած էր։

Նահատակուած Ապետիքի որդին Մուրատ, Շահ Աբասի յաջորդ Սաֆիի քով ապաւինեցաւ թուրքերու ձեռքէն ազատելու համար, մինչ մայրն ու կինը, որ նոյնպէս Քիլիսէն էին, Հալէպ մնացին։ Պարսիկները բարեկամաբար, մանաւանդ թէ իր ազնուականութեան վայել պատիւով ընդունեցան ու Շահը իր քով կանչեց զինքը։ Ժամանակով սակայն երբ Հալէպի վիճակը նորէն մեղմացաւ, հոն մնացած ազգականները փութացին առիթը օգտագործել որպէսզի կարենան ապահովել անոր վերադարձը ու կարենան ձեռք ձգել կալուածներու գէթ այն մասը որ Հալէպ մնացող երկու կիները կը խնամէին։ Մուրատ վերադարձաւ Հալէպ, հանգիստ և անվրդով ապրեցաւ մինչեւ իւր ծերութիւնը։ Տասներկու զաւակներ ունեցաւ, որոնցմէ սակայն կրտսերագոյնը՝ ապագայ Հունգարացի Կոմս Պետրոս Ապետիքը միայն կենդանի մնաց։ Մայրը, ինչպէս մեզի հասած տուեալներէն կ'երեւի, շատ կորովի ու ճարտար կին մըն էր որ մեծ խնամքով դաստիարակեց իր որդին, ի սպաս զնելով ամէն զոհողութիւն և իր նիւթական բոլոր միջոցները։ Անոր կրթութեան մեծապէս օժանդակեց նաեւ Հալէպի ֆրանսացի դեսպանը, Ֆրանսուա Փիքէ, որ եղաւ նաեւ Ապետիքը իր ասպարէզին մէջ առաջ մղողներէն գլխաւորը։

Քանի մը խօսք նաեւ Ֆրանսուա Փիքէի

(2) Պետրոս աէ վալլէ Ժէ դարէն, որուն գործերը Ապետիքն ալ կը ծանօտայ, Աւելի վերջէն անոր հետ խնամի ալ եղաւ վենետիկեան իտալ - պարսիկ ամուսնութեան մը հետեւանքով, վալլէ իտալական հին ներգաշնակ ոճով մը այսպէս կը գրէ Ապետիքի մեծ - հօրեղբոր՝ պարսիկ շահին արքունիքը ապրող Աստուածատուր կամ Ապետիքի մասին. «... quando tante

migliaia di cristiani andarono sottosopra e furono fatti schiavi: egli per amor di Dio, ricomprò a sue spese e diede libertà, a più di quattromila persone; facendo trovar con diligenza, benchè in luoghi lontani, figliuoli a' padri, le mogli a i mariti, i parenti a i parenti... ».

մասին ըսենք, որ Ապետիքը ազատելով Եւրոպա բերած էր, և արծարծած անոր մէջ սէրը Արեւմտեան քաղաքակրթութեան: Փիքէ 1626ին ծնած Լիոնի մէջ գրամատան պաշտօնէի մը զաւակն էր: Քսանդհինգ տարեկան էր երբ թագաւորը զինքը Հալէպի Ֆրանսական դեսպան անուանեց, ուր իր արդիւնաւոր գործունէութեամբ փայլեցաւ: 1660ին սակայն կրօնաւորական կեանքի նուիրուեցաւ ու երկու տարի վերջ վերադարձաւ Եւրոպա, ուր քիչ ժամանակէն Առաքելական քարտուղար (Protonotarius Apostolicus) անուանուեցաւ, ու եկեղեցական ասպարէզի մէջ տառջ երթալով 1675ին Կեսարուպոլսի (Մակեդոնիա) առաքելութիւններու եպիսկոպոսութեան բարձրացաւ: Սակայն նա չէր ուզեր Եւրոպա մնալ, կը փափաքէր նորէն արեւելք վերադառնալ, ու 1679ին զինք նորէն Հալէպ կը գտնենք⁽³⁾:

Փիքէ շատ լաւ յարաբերութեան մէջ էր Ապետիքին հետ, իբր Հալէպի ազնուականագոյն քրիստոնեայ ընտանիքը: 1650-60ական թուականներուն՝ շատ սերտ յարաբերութիւններ կը մշակէր Ապետիքի խնամակալներուն հետ, որոնց այնպէս կը թուէր թէ Ապետիք չափահաս ըլլալէ վերջ պիտի շարունակէր իր նախնիքներու կեանքը: Սակայն երբ կորովամիտ տղան 13 տարեկան եղաւ, Սուլթանը ճակատագրական հրաման մը հանեց: «Քանի որ պատանին արժանի է՝ արքունիք բերուի իր ծառայութեան համար, որով պիտի փառաւորուէր և պատուով ճոխանար Ապետիք գերգաստանը»: Այս պատիւներու ետեւ ծածկուած էր շատ յայտնի յետին միտք մը: Սուլթանը արեւելեան հին սովորութեան համաձայն կ'ուզէր արքունիքին մէջ ունենալ ընկճուած ազգերու ազնուական և ազդեցիկ ընտանիքներու երիտասարդ ընծիւղները, թէ՛ իբր պատանդ և թէ՛ որպէսզի զանոնք խաւմութեան ու

թրքական քաղաքականութեան կարենար ծառայեցնել: Ասոր համար ուրեմն անհրաժեշտ էր որ 13 տարեկան Ապետիքը պոլսական կրթութիւն ստանար: Իմաստուն մայրը սակայն լաւ յարաբերութիւններու միջոցաւ առաջուց իմացաւ այս ծրագիրը ու ատենին փախցուց որդին հաւատարիմ մարդերու ձեռքով դէպի աւելի ապահով երեւցող Երուսաղէմ, որ Հալէպէն 600 քիլոմետր հեռու կ'իյնայ դէպի հարաւ:

Պատանին, իրեն ընկերացող մօրը հաւատարիմ մարդոց հետ, կը թողու քաղաքը ամենածածուկ կերպով, ու ծովի զուգահեռական գծով կ'իջնէ Համա, Հոմա, ապա Լիբանաններն անցնելով դէպի 'Կամասկոս' կը մտնէ Ս. Երկիրը, որու մասին շատ բաներ լսել էր ատն մէջ: Տիրերիւս ծովակը, Յորդանանը, Կոպլուս և ուրիշ աստուածաշունչական տեղեր կ'իյնային ճամբուն վրայ: Կարաւանը վերջապէս կը հասնի Երուսաղէմ: Չենք կրնար բուարար կերպով գնահատել այս ճամբորդութեան ազդեցութիւնները զգայուն պատանին վրայ, որ իր չափահասութեան ժամանակն ալ ստէպ կը վերլիչէր զանոնք:

Մինչ այս, տղուն փախուստէն հազիւ քանի մը օր վերջ, Հալէպի քաղաքապետը, (ինչպէս կը յիշուի աղբիւրներու մէջ) կը կանչէ մայրը և ուրախութեամբ կ'աւետէ իրեն մեծ լուրը, թէ Փատիշահը արժանի դատած է որդիդ Պոլսոյ արքունիքը Սուլթանի հովանիին տակ կրթուելու: Մայրը առանց հանդարտութիւնը կորսնցնելու կը պատասխանէ թէ, մեծապէս երախտապարտ է Փատիշահին այս մեծ շնորհքին համար, սակայն պէտք է սպասել մինչեւ որ Մանուկը - այս էր տղուն մկրտութեան անունը - վերադառնայ Երուսաղէմէն, որպէս զի հրամանին համեմատ պատրաստուի ու դէպի Պոլիս ճամբայ ելլէ:

Հալէպի քրիստոնեայ առաջնորդներն ու

lande à Alep, ensuite évêque de Césaropole; Paris, 1732.

ազգականները անմիջապէս հաւաքուեցան տղուն վիճակի մասին խորհելու: Կը վճռեն Պետրոս Ապետիքի կեանքին ուղղութիւնը, նոր ասպարէզը: Ինչպէս Լէոփոլտեան վաւերագիրներէն կը տեսնուի, այս խորհրդակցութեամբ որոշուեցաւ տղան նուազ ապահովութիւն ունեցող Ս. Երկրէն փախցնել Հոմա, որպէս զի անոր բողոքող կարողութիւնները կարենան զարգանալ քրիստոնէութեան օգտին: Սկիզբը կարմեղականի մը և ընտանիքին հին ու լաւ բարեկամ Փիքէ դեսպանին խորհուրդին վրայ, յարմարագոյն տեղը նկատեցին Ֆրանսան՝ իբր վերջակէտ տղուն փախուստին: Ետոյ սակայն Հոմի վրայ միացան կարծիքները:

Հալէպի փաշան սակայն շուտով կասկած առաւ: Քաղաքապետն ալ սկսաւ խուզարկութիւններ ընել: շատ անգամներ կանչուեցաւ մայրն ալ, որ սակայն հաստատուն կերպով կը մերժէր տղան փախցուցած ըլլալը: Փաշան վերջապէս իմացաւ իրականութիւնը: Բայց ազդեցիկ Ֆրանսուս Փիքէ զիւէր կերպը, մեծաբանակ ոսկիով հանդարտեցուց թուրքին կատաղութիւնը, որ իր կարգին խնդիրը կարգադրեց Պոլսոյ հետ:

Տղան - ինչպէս յետոյ կը գրէ ինքն իր մասին - «անշլաս հոգիով ու մարմնով հասաւ Հոմա»: Այլեւս իր կեանքին գրեթէ ամբողջ գործունէութիւնը հակաթրքական կռիւն է որ կը զբաւէր: Ոչ միայն իր կրօնական դատաւարականութիւնը, այլ նաեւ շատ մը հոգեբանական ազգակներ՝ հակաթրքական համաձայնութեամբ մը Օսմանեան իշխանութեան խորտակումին աշխատելու շարժառիթը տուին: Ասոր նպաստեցին իր խորին զգացումին հետ նաեւ այն գիտակցութիւնը թէ մեծ հայրը թուրքերէն գլխատուած էր ու ինքն ալ ստիպուած էր փախչիլ, թողուլ մայրը, տունը և իրենները քրիստոնեայ ըլլալուն համար: Իր երիտասարդութեան՝ գոյացուցեր էր պարսիկներու հանդէպ համակրութիւն մը, որովհետեւ ընտանեկան յիշողութեան ու մտածելակերպին մէջ, Պարսկաստանը միշտ կը ներ-

կայանար իբր ամուր ապաստանարան մը, Պարսիկներէն անգամ «բարբարոս» կոչուած թուրքերու դէմ:

Մովսիսի երկար ճամբորդութեան յոգնութիւնը անցնելէն վերջ, Փիքէի և իր ազգականներու ծրագրին համաձայն տղան Ուրբանեան վարժարան տարին: Այս վարժարանը 1621ին Ուրբանոս Ը Պապը հաստատած էր, գլխաւոր նպատակ ունենալով թրքական իշխանութեան տակ գտնուող երկիրներուն համար քահանաներ ու քարոզիչներ պատրաստել: Փոքր Ասիայէն, Սիրիայէն, Միջագետքէն ու շրջակայ աշխարհներէն քրիստոնեայ պատանիներ, շատ անգամ որք մնացած ազնուական պատանիներ գտած են հոն կրթութիւն: ասոր միակ նպատակն էր, տարածուող մահմեդականութեան դէմ պատրաստել քրիստոնէական գաղափարական յառաջապահ մարտիկներ և Արեւելք զրկել: Հաւատոյ Ծաւալման Ս. Ժողովի ներքեւն է որ կը գործէ այս վարժարանը, ուր արձանագրուեցաւ Պետրոս Ապետիքն ալ: Հոս փոխեց ան իր մկրտութեան անունը Պետրոսի: Դեռատի աշակերտը իբր դաստիարակ ունեցաւ ժամանակի նշանաւորագոյն ուսուցիչները. զորս չէր մոռցած իր պաշտօնին բարձրութեան հասած ժամանակն ալ: Իտալերէն ու Լատիներէն կը սորվեցնէր ճովանդակութիւն Սաքէթ, Փրանկիսկոս Պարպերինի ծիրանաւորը իմաստասիրութիւն կ'աւանդէր, Յովհաննէս Պրէննան, Մարիոյ Ալպիցիոյ և Անդրէաս Պոնտիլիի իր վարժապետներն եղած էին: Ծանրաբեռնուած օրակարգի ուսումներու զբաղանքներով հանդերձ, ուշիմ պատանին բաւական առիթ ունեցաւ ծանօթանալու Յաւիտենական քաղաքին դասական արուեստին ու մշակոյթին: Զմայլելի շէնքերն ու եկեղեցիները, յուշարձաններն ու գրատունները, քաղաքին եռուն կեանքը, և մանաւանդ դիւանագիտական շարժուն երթեւեկները, Պապական պալատը՝ իրենց ամբողջութեամբ խոր հեռանկարներ կը պատրաստէին իր մէջ:

(3) Ch. O. D'Antelmy: La vie de Messire François Picquet, consul de France et de Hol-

Ապետիք ուսման մէջ շատ փայլուն յաջողութիւններ ունեցաւ: Իր վերջնական քննութիւնները մեծ հանգիստաւորութեամբ կատարեց եօթը ականաւոր ծիրանաւորներէ կազմուած յանձնախումբի մը առջեւ, որոնցմէ էին Փրեզերիկոս Սֆորցա, Ֆլաւիանոս Քիճի, Յուլիոս Ռոսիլիոզի որ յետոյ քահանայապետ ընտրուեցաւ Կղեմէս Թանունով:

Քննութիւնները այնքան յաջող անցան որ բոլոր քննիչները փայլուն ապագայ մը կը գուշակէին իրեն, իսկ ապագայ պապը՝ մինչեւ իսկ ծիրանաւորութեան աստիճանի մասին կը խօսէր:

Ասկէ վերջ Ապետիք աստուածաբանութեան ընթացքին նուիրուեցաւ, ասոր մէջ ալ իր վարժապետներուն գնահատանքին ու մինչեւ իսկ հիացումին արժանանալով:

Եկեղեցական հանգիստ պաշտօն մը կը սպասէր իրեն Հռոմի մէջ: Ինքը սակայն տարիներու յառաջացումով, կեանքի ծանր հարցերու առջեւ կը գտնէր ինքզինքը: Մանկութենէն ի վեր գործունէութեան, շարժումի ու կեանքի պայքարին վարժած՝ չէր կրնար իր հոգին համակերպել այն մտաւ՝ ծութեան որ կեանքը անցընէ հանգստի մէջ՝ հեռու ազգերու գիւնադիտական կուռի

ասպարէզէն: Ան վառ պահած էր իր ծրագիրն ապատակը, որ միշտ աւելի կ'արծարծէր ուսումով և վճռական կէտի առջեւ գտնուող աստուածաբանը կը մղէր վերջնական կերպով թողուլ Հռոմի գործունէութիւնը, գիտութիւնն ու կարողութիւնները իրենց բոլոր ուժով՝ գործածելու ի նպաստ Արեւելեան և Արեւմտեան քրիստոնէութեան, ստանձնելով գծուարութիւններ, վիշտ և յոգնութիւն: Այս գաղափարական էր ուրեմն որ Ապետիքի մէջ կը ճակատէր Հռոմի մէջ պաշտօն մը վարելու կարելիութեան դէմ:

Ապետիք վերջապէս որոշումը տուաւ. պիտի չձեռնադրուէր, այլ իր գործունէութիւնը պիտի նուիրէր թրքական իշխանութեան խորտակումին: Իր լեզուագիտութիւնը, ծանօթութիւններն ու կորովը զինքը կը նախասահմանէին միջնորդ ըլլալու ընդմէջ եւրոպացի և արեւելցի խալիֆայի պաշտօնի միջնորդին: Իր անհանգիստ բնաւորութիւնն ալ աւելի այս ասպարէզին կը հակէր: Իրապէս, քիչ վերջ, կը գտնենք զինքը Կղեմէս Թ-էն պարսիկ Շահին զրկուած պատուիրակութեան մէջ:

Թրգմ. Հ. ԱՆԴՐԵԱՍ ՖՈԿՈԼԵԱՆ

(Շարունակելի)

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԳԻՒՂԻՆ ՀՈՎԻԿԸ

Անտառներէն միշտ կու գայ մեր գիւղին հովը թռչնիկ,
Ինչպէս հովիւ մը մատաղ թռթովելով իր սրինգ.
Եւ կը տանի գիւղէ գիւղ հառաչանքներ սրտերու
Որոնք զերար կը սիրեն և կը մընան միշտ հեռու:

Կը բարձրանան ցորեններն ալիքի պէս հեռաւոր
Մըմլելով իրարու հօտաղներու երգն աղուոր.
Ծաղկած թուփերն ալ կը զգան Վարդապառի ալքերիւն
Երազելով օրերն հեշտ աղջիկներու պարերուն:

Կը նըւագէ գոնէ դուռ աշուղներու հետ գիւղին
Սարերու երգն հովուական և հարսերու Անտունին,
Իր մատներով կը բախէ պատուհանէ պատուհան
Ինչպէս կապոյտ աղաւնի արեւու շողն իր բերան:

Եւ ինքն է միշտ աննիւթ ծով թռչուններուն նորաթեւ,
Որոնք ուրախ կը սահին նաւակներու պէս թեթեւ.
Թեւերն իրենց կը թռչին առագաստներ բազմերանգ
Եւ օդին մէջ ծիրանի, և երկնքի երազանք:

Ո՛րքան թառիլ կը սիրէ հովիկն հանգարտ ծառերուն,
Կանանչ տերեւն իր վրան և կուրծքին տակ տաքուկ բոյն,
Թռչուններուն պէս փոքրիկ գունեան փետուր ունենալ
Եւ արտոյտին հետ երգել արշալոյսներ ոսկեփայլ:

Բայց երբ կու գայ հիւսիսէն վարդերն ինչո՞ւ կը սարսին,
Ինչո՞ւ կ'ըսեն թէ չունի սիրոյ անոյշ մեղեդին.
Ո՛հ, նա ըստէպ կը բերէ փերիններու հառաչներ
Որոնց շրթներն արեգակն երբեք կարմիր չի ներկեր:

Ալիքի պէս իր սիրտն ալ կը տենչայ միշտ ջերմ ափունք,
Հորիզոններ ծիրանի և վարդերու հեշտ բուրմունք,
Զէք լըսեր դուք գիւղերներն իր կաղկանձիւնն ողբերգակ
Երբ կը շրջի որբի պէս փնտռելով միշտ արեգակ:

Միշտ մանուկ է մեր հովիկն ու կը սիրէ բաց երկինք,
Քաշել մազերն հարսերու, շոյել դէմքեր գեղեցիկ.
Երբ ճամբուն մէջ կը տեսնէ կին մը ձերմակ քողերով
Քըզանցքն անոր ամպի պէս կը տարտղնէ ժպտելով:

Եւ բուռ մը յարգ իր ձեռքին դարձադարձիկ կը խաղայ
Թիթեռնիկներ կարծելով փոքրիկ շողերն այդ ոսկեայ.
Յանկարծ ժպտուն կը թառի բարտիներու կատարին
Խառնըւելով թեւամփոփ թռչուններու երամին:

Բայց երբ ամպի մութ շուքեր կապոյտին մէջ կը շրջին
Թռչիւք՝ կ'առնէ արծուի պէս խոյանալով դէպ' երկին,
Լայն շարժումով թեւերու կալի նըման կը սրբէ
Որ չսպառնան փոթորիկ և կարկուտներ արձիճէ:

Հընչիւններով կը լեցուի փոքրիկ երկինքը գիւղին
Զերդ արծաթեայ երգեհոն կամարներու տակ ժամին.
Դարձեալ թեւերն իր արփին սիրելաբար կը բանայ
Փարելով մեր գիւղերուն ինչպէս նոր հարս ու փեսայ: